ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/107

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ («ԷԿԵՆԳ» ՓԲԸ)
Մասնակից՝ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցում, ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդման և սպասարկման ծեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5344-2020 գրությամբ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.04.2020թ. թիվ 1260 գրության հիման վրա, 09.04.2020թ.-ին «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 09.04.2020թ.-ին:

10.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/107 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2020թ.-ին:

2. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն, 08.04.2020թ. թիվ 1260 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 2020 թվականի հունվարի 10-ին կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս ստանձնել էր «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կարիքների համար ավիատոմսերի ամրագրման և դուրսգրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդրման և սպասարկման ծառայությունների մատուցման

պարտավորություն (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական բնութագրի դրույթների:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը կետի ա) ենթակետը և Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Տեխնիկական բնութագրի «Տեխնիկական պահանջներ» մասի 5-րդ կետը (2 անգամ սահմանվել է ողջամիտ ժամկետ)՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ պարտավոր է Պայմանագրի 5.2 կետի համաձայն վճարել տուգանք՝ 85860 (ութսունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Ինչպես նաև, սույնով տեղեկացնում ենք, որ «Տուժանքի մասին համաձայնագրի» 4-րդ կետի համաձայն՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն «Տուժանքի մասին համաձայնագիրը» և դրան կից Պահանջագիրը ներկայացնում է Վճարող Բանկ՝ 1.717.200 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը որպես Պայմանագրի կատարման ապահովում ստանալու համար:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Կատարողը պարտավորվել է մատուցել Ծառայություն՝ Պայմանագրին կից Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան: Սակայն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետի ա) և բ) ենթակետերը, ինչպես նաև 2.1.3 կետի ա) ենթակետը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, քանի որ Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ ընդ որում պայմանագրի նույն կետի ա) ենթակետի համաձայն պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված պահանջներին, իսկ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից չի մատուցվել Ծառայություն (2020 թվականի հունվարից մինչև մարտ ամիս ներառյալ):

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 7.11 կետի պահանջների, Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը կատարվել է պատշաճ ձևով (http://gnumner.am/website/images/original/17%20%20.pdf)՝ 2020 թվականի ապրիլի 2-ին: Համաձայն կարգի, հրապարակման հաջորդ օրը՝ 2020 թվականի ապրիլի 3-ին պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

Միաժամանակ, ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում ենք «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի

նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալներից ներկայացվել է հայտարարված «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5344-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Հաշվի առնելով, որ «ԷԿԵՆԳ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու որոշումը ենթակա է վիճարկման միայն դատական կարգով, որը համեմատած «Գլոբալ Սոլուշն» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու թիվ ՍՑ-ԼՕ-2020/107 ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հետ ենթադրում է առավել երկար ընթացակարգային վարույթ, իսկ Օրենսդիրը չի սահմանել Ընթացակարգի վարույթը կասեցնելու իրավական հնարավորություն, ուստի սույն Ընթացակարգի շրջանակում քննության է ենթակա նաև Պայմանագիրը միակողմանի լուծելու որոշման իրավաչափությունը, քանզի Ընթացակարգի շրջանակում այլ կերպ Ընկերությունը զրկվում է իրավական պաշտպանությունից:

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

✓ Պատվիրատուի և Ընկերության միջև թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Գնման ընթացակարգ) շրջանակներում 12.12.2019 թվականին կնքվել է թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Հիմք՝ Պայմանագիրը:

✓ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացնելու նպատակով հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում կողմերի միջև 10.01.2020 թվականին կնքվել է համապատասխան համաձայնագիր: Հիմք՝ կողմերի միջև Պայմանագրի շրջանակում 10.01.2020թ. կնքված N1 համաձայնագիրը:

✓ Պատվիրատուն փորձել է ծառայությունների մատուցումն բաժանել առանձին մասերի և դրանց կատարման համար սահմանել իրեն նպատակահարմար ժամկետներ, ինչը դուրս է եղել Պայմանագրի շրջանակներից և ենթադրել է Պայմանագրի արհեստական փոփոխություն, ավելին նա փորձել է այդ ժամկետներում դրանց կատարման իրականացումը պարտավորեցնել Ընկերությանը, ինչպես նաև այդ առանձին մասերի հանձնում-ընդունումը իրականացնելու նպատակով հրավիրել հանդիպումներ, որը մերժվել է Ընկերության կողմից հաշվի առնելով Պատվիրատուի վարքագիծը և Պայմանագրի շրջանակներից դուրս իրականացված գործողությունները: Հիմք՝ Պատվիրատուի 02.03.2020թ հ. 1196, 05.03.2020թ հ. 1198, 09.03.2020թ էլ փոստով ներկայացված գրությունները և Ընկերության կողմից ներկայացված պատասխան գրությունները:

✓ Պայմանագրով նախատեսված ծառայությունների չափման միավորը սահմանված է դրամ, իսկ քանակը 1, ինչը ենթադրում է, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների առանձին մասերի բաժանումը կհանգեցնի պայմանագրի արհեստական փոփոխության:

✓ Ընկերությունը բազմիցս տարբեր գրություններով տեղեկացրել է Պատվիրատուին, որ Պայմանգրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ընդհանուր ժամկետը սահմանված է 36 (երեսունվեց) ամիս, առանց ծառայությունների մատուցման առանձին մասերի կատարման օրացուցային գրաֆիկի սահմանման և որ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման համար պարտադրված ժամկետները դուրս են Պայմանագրի շրջանակներից, սակայն հաշվի առնելով Պատվիրատուի համար այդ ժամկետների կարևորության հանգամանքը կփորձի ղրանք իրականացնել:

✓ Պատվիրատուն 11.03.2020թ հ. 1237 գրությամբ դիմել է Ընկերությանը 3 աշխատանքային օրվա ընթացքում շուրջ 400 օգտատիրոջ համար դասընթացների կազմակերպման պահանջով՝ հղում տալով Պայմանագրի տեխնիկական բնութագրի 7-րդ կետին, որը ներկայացված է ստորև.

7. Այլ պայմաններ

1. Կապարողը պարտավոր է ապահովել Հարթակից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցում՝ Հարթակի օգտատերերի համար:

2. Ծրագրային նորությունների և փոփոխությունների վերաբերյալ ձեռնարկների, վիդեոդասընթացների, հեռակա օնլայն խորհրդատվությունների տրամադրում:

3. Ուսուցումը կազմակերպվում է Պատվիրատուի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ուսուցման ենթակա մասնակիցների ցանկը տրամադրում է Պատվիրատուն:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ Պատվիրատուն 11.03.2020թ. դրությամբ ունեցել է հարթակ, որի հիման վրա Ընկերությանը դիմել է դրանից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցման կազմակերպման պահանջով: Հիմք՝ Պատվիրատուի 11.03.2020թ հ.1237 գրությունը և Ընկերության 16.03.2020թ էլ փոստով ներկայացված գրության պատասխանը և տրամադրված ուսուցման դասընթացի հղումները:

✓ Պատվիրատուն 02.04.2020 թվականին ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին: Հիմք՝ Պատվիրատուի կողմից 02.04.2020 թվականի հ. 1256 գրությունը:

✓ Պատվիրատուն 02.04.2020 թվականին ծանուցելով Ընկերությանը Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, որպես հիմք մատնանշել է Ընկերության կողմից իր պարտավորությունները «հավուր պատշաճ» չկատարելը, կից ներկայացնելով անհիմն եզրակացություն և Պայմանագրի տեխնիկական բնութագրի կատարման վերաբերյալ աղյուսակ, քանի որ Ընկերությունը չունենալով

✓ Ընկերության կողմից 2020 թվականի հունվար ամսվա ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց Պատվիրատուն վճարել է կողմերի միջև Պայմանագրի շրջանակում 10.01.2020թ. կնքված N1 համաձայնագրով հաստատված վճարման ժամանակացույցին համապատասխան՝ 477000 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:

Դիրքորոշման փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 56-րդ կետի համաձայն՝ արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

1) պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը.

2) պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ

ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված ժամկետում.

3) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Շինարարական աշխատանքների դեպքում սույն ենթակետով նախատեսված տոկոսի հաշվարկի մեջ չեն ներառվում սկզբնական նախահաշվով նախատեսված ծավալների նկատմամբ առանց նախագծային փաստաթղթերի փոփոխության փաստացի կատարված աշխատանքների ճշգրտումները: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը.

4) պայմանագրով, ներառյալ փուլային ձևով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ կամ պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական կարիքների բավարարման նպատակով, արտադրանքի նոր տեսակների հեռանկարային մշակման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գնումների դեպքերի: Ընդ որում, սույն ենթակետում նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել՝ մինչև պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալը՝ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, իսկ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ.

5) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի կամ նախագծային առաջադրանքների անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը.

6) պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների:

Կարգի 57-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կողմերի միջև 12.12.2019թ. թվականին կնքված Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը սահմանվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելուց և դրա հիման վրա համաձայնագրի կնքումից հետո 36 (երեսունվեց) ամիս:

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը Պայմանագրի միակողմանի լուծման հիմք նախատեսել է այն դեպքում, երբ մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն:

Հետևյալ հանգամանքները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ ավիատոմսերի ամրագրման եվ դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդման եվ սպասարկման ծառայությունների մատուցման ընդհանուր ժամկետը Պայմանագրով սահմանվել է 36 ամիս, 2020թ հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում Ընկերությունը Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարել է պատշաճ, հունվար ամսվա ընթացում իրականացված գորունեության համար Պատվիրատուից ստացել է այդ ամսվա համար նախատեսված գումարը, որից հետո Պատվիրատուն որոշել է, որ Պայմանագրի շրջանակներից դուրս կարող է ծառայությունները բաժանել առանձին մասերի, սահմանել դրանց կատարման համար ժամկետներ և Ընկերությանը պարտավորեցնել դրանց կատարումը: Ընկերությունը մերժելով Պատվիրատուի նման վարքագիծը, սակայն հաշվի առնելով Պատվիրատուի համար այդ ժամկետների կարևորությունը, չունենալով որէ պարտավորություն մինչև 16.03.2020թ Պատվիրատուին տրամադրել է հարթակ, ինչը նաև հիմնավորվում է նրանով, որ Պատվիրատուն չունենալով հարթակ չէր կարող դիմել դրանից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցման կազմակերպման պահանջով: Մատուցած ծառայությունների դիմաց յուրաքանչյուր ամիս վճարում ստանալը Ընկերության որոշումը չէ, քանի որ ծառայությունների մատուցման չափման միավորը Պայմանգրով սահմանված է դրամ, իսկ քանակը 1, ինչը ենթադրում է, որ ծառայությունները չեն կարող բաժանվել

առանձին ծավալների և պետք է ամբողջական մատուցվեն 36 ամսվա ընթացքում, իսկ պայմանագրային պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո նոր միայն կարող է կատարվել հանձնում-ընդունում և դրա հիման վրա փոխանցվի ընդհանուր գումարը՝ առանց կանխավճարի տրամադրման: Ամսական գումարի տրամադրման առաջարկը եղել է Պատվիրատուի կողմից, որի հիման վրա Ընկերությունը յուրաքանչյուր ամիս դուրս է գրել հաշիվ-ապրանքագիր և ստացել միայն հունվար ամսվա գումարը, ուստի պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման հիմքեր և դրանով պայմանավորված Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:»:

Ելնելով վերոգրյալներից Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և պայմանագիրը միակողմանի լուծելու որոշման իրավաչափության և Պատվիրատուի գործողությունների վերաբերյալ տալ գնահատական:

4. <u>ՍՑ-LO-2020/107 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 12.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ համաձայնագրի կնքումից 20 աշխատանքային օրվա ընթաքցքում: Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը համաձայնագրի կնքումից հետո 36 ամիս:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին կնքվել է թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման պայմանագրի Համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի 2.1 կետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և պարտադիր դառնում կնքման պահից:

Պատվիրատուի՝ տնօրենի տեղակալ Տ. Մարկարյանի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որում նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հարթակը պետք է ապահովի հաճախորդի պրոֆայլի ստեղծման, վարման և պահպանման հնարավորությունները, սակայն գործառույթն հասանելի չէ Ամրագրող 1 և Ամրագրող 2 օգտատերերի համար: Այն պարագայում, որ դա հենց այդ օգտատերերի գործիքն է: Ավիատոմսերի որոնում, ամրագրումը և դուրսգրումը ապահոված չէ: Ավիատոմսի դուրսգրման հնարավորությունը (գործառույթը) Հարթակում բացակայում է: Հարթակը պատշաճ չի աշխատում և այլն:

Վերոգրյալների հաշվառմամբ տրվել է բացասական եզրակացություն:

02.03.2020թ.-ին թիվ հ. 1196 գրությամբ Պատվիրատուի ղեկավարը դիմել է մասնակցին և հայտնել է հետևյալը. *««ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլյուշն» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կատարման շրջանակում ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդրման և սպասարկման ծառայությունների սկիզբ համարվում է 2020 թվականի հունվարի 10-ը՝ ֆինանսական միջոցները հատկացնելու վերաբերյալ կնքված համաձայնագրի հիման վրա:*

Ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա, հետևաբար, անհրաժեշտ է փաստացի ընդունել հարթակը, որը կհամապատասխանի Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված դրույթներին և ապա ամսական պատշաճ մատուցված ծառայությունների համար կատարել համապատասխան վճարումներ: Մինչդեռ, Հարթակի փաստացի հանձնում չի կատարվել, և Ձեր կազմակերպության կողմից դեռևս փաստացի շահագործման չհանձնված Հարթակի ծառայության համար 2020 թվականի հունվար և փետրվար ամիսներին ներկայացվել են հաշվարկային փաստաթղթեր:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, հավատարիմ լինելով խնդիրների կարգավորման գործընկերային ոճին և հաշվի առնելով Հարթակի աշխատանքի բարդ մեխանիզմը, ժամանակատարությունը և այլ հանգամանքներ՝ երկու ամիս շարունակ բանավոր բանակցային ընթացակարգով աշխատել է Ձեր կազմակերպության ներկայացուցչի (Վ.Նիկոյանի) հետ, մասնավորապես API ծրագրային ապահովման աշխատանքների կազմակերպման մասով: Այս հարցում առկա խնդիրների լուծումը իրականացվել և

իրականացվում է համատեղ: Սակայն սույն Հարթակի գործողությունը չի սահմանափակվում միայն API ծրագրային լուծման ինտեգրմամբ:

Անշուշտ, չենք բացառում այն, որ Ձեր կողմից ներկայացվել է հարթակի գործողության նախնական տարբերակները:

Միևնույն ժամանակ, Ձեր կողմից առկա էր բանավոր հավաստիացում, որ 2020 թվականի մարտի 1-ին կունենայինք ներդրված Հարթակ, իսկ 2020 թվականի մարտի 15-ին արդեն պետական մարմինները կկարողանային օգտվել դրանից, կարծում ենք, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրվել է ողջամիտ ժամկետ՝ լիարժեք գործող Հարթակ ստանալու համար:

Այս համատեքստում մեր կողմից կատարված վճարումը դառնում է անհիմն:

Մենք հանդես ենք գալիս նախաձեռնությամբ՝ կազմակերպելու հանդիպում, որի ընթացքում կկատարվի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների գույքագրում (ըստ կատարման), կարձանագրվեն այն խնդիրները, որոնք առկա են և ենթակա են ողջամիտ ժամկետում կարգավորման, իսկ այդպիսիք չլինելու դեպքում՝ կկատարվի Հարթակի հանձնում-ընդունում:

Այնուամենայնիվ, առաջարկում ենք վերանայել, պատրաստել և ներկայացնել այն պահանջները, որոնք գուցե անհրաժեշտ են տվյալ հարթակի գործնեության ապահովման համար և գուցե գտնվում են «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի հնարավորությունների տիրույթում:

Հաշվի առնելով մեր 2020 թվականի մարտի 15-ին Հարթակը պատշաճ մակարդակով շահագործման չհանձնելու մտավախությունը և մտահոգությունը, ինչպես նաև Ձեր կողմից նախաձեռնության բացակայությունը՝ խնդրում ենք 2020 թվականի մարտի 5-ին ժ.10.00 «ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակում ներկայացնել ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակը՝ հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպելու մտադրությամբ:

Հանդիպմանը դիտարկվելու են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի դրույթները:

Հարթակի փորձնական շահագործումը մեր աշխատանքային խմբի կողմից կիրականացվի «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և Ձեր կազմակերպության ներկայացուցիչների (Ձեր ցանկությամբ) ներկայությամբ և կարձանագրվեն կատարված աշխատանքներն ու առկա խնդիրները:»:

05.03.2020թ.-ին թիվ հ. 1198 գրությամբ Պատվիրատուի ղեկավարը դիմել է մասնակցին և հայտնել հետևյալը. *«2020 թվականի մարտի 2-ին հ.1196 գրությամբ Ձեզ ենք ուղղել նամակ-հրավեր, որով առաջարկել ենք համատեղ գույքագրել, թե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլյուշն» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրային (այսուհետ՝ Պայմանագիր) պարտավորություններից որոնք են կատարված, իսկ երկկողմ հնարավոր թերացումների, թերությունների և շտկումների կարիքի բացահայտման դեպքում պատրաստակամ ենք սահմանել ողջամիտ ժամկետ՝ Ձեր կողմից ծառայությունը պատշաճ՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցելու համար:*

Սակայն, հանդիպումը չի կայացել, քանի որ Ձեր կազմակերպության ոչ մի ներկայացուցիչ չի ներկայացել, և միևնույն ժամանակ 04.03.2020թ. ժ.19.06 «ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն Լ. Ավետիսյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում Դուք հայտնել եք, որ հարթակը չեք կարող ներկայացնել 05.03.2020թ., և Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների գույքագրումը չի կատարվի, քանի որ դրա նպատակահարմարությունը, ըստ Ձեզ, առկա չէ:

Պահպանելով գործընկերային գործելաոճը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածը, 706-րդ հոդվածի 1-ին մասը և 713-րդ հոդվածի 3-րդ մասը և Պայմանագրի 2.1 կետի ա) ենթակետը, Պայմանագրի կատարման ողջամիտ ժամկետ ենք դիտարկում 2020 թվականի մարտի 11-ը, որպեսզի մարտի 15-ին շահագործման հանձնվի և պետական մարմինների կողմից օգտագործվի Հարթակը ավիատոմսերի ամրագրման և ապա ավիատոմսերի դուրսգրման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդրումը ունի խիստ կարևոր նշանակություն պետական գործուղումների կազմակերպման հարցում, և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն օրենսդրորեն իրեն վերապահված լիազորությունները այժմ կատարելիս փաստացի կրում է ֆինանսական վնաս՝ կապված Ձեր գործողությունների և անգործության արդյունքում այլ գործընկերների հետ հարաբերություններում: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք սահմանված ողջամիտ ժամկետում ներկայացնել ամբողջ հարթակը՝ տեխնիկական բնութագրին համապատասխան, որպեսզի հետագայում՝ ամսական ծառայությունների շրջանակում պատշաճ իրականացվի համապատասխան ավիափոխադրումներին վերաբերելի պայմանագրերի ինտեգրումը (Պայմանագրի տեխնիկական բնութագրի 3.4 կետ) և փաստացի ավիատոմսերի դուրսգրումը:

Հաշվի առնելով մեր 2020 թվականի մարտի 15-ին Հարթակը պատշաճ մակարդակով շահագործման չհանձնելու մտավախությունը և մտահոգությունը, ինչպես նաև Ձեր կողմից նախաձեռնության բացակայությունը՝ խնդրում ենք 2020 թվականի մարտի 11-ին ժ.10.00 «ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակում ներկայացնել ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակը՝ հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպելու մտադրությամբ:

Հանդիպմանը դիտարկվելու են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի դրույթները:

Հարթակի փորձնական շահագործումը մեր աշխատանքային խմբի կողմից կիրականացվի «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և Ձեր կազմակերպության ներկայացուցիչների (Ձեր ցանկությամբ) ներկայությամբ և կարձանագրվեն կատարված աշխատանքներն ու առկա խնդիրները:»:

Ի պատասխան Պատվիրատուի 05.03.2020թ.-ին թիվ հ. 1198 գրությանը, Մասնակիցը 09.03.2020թ.-ին հայտնել է հետևյալը. *« ՈՒսումնասիրելով Ձեր 05.03.2020թ. թիվ 1198 գրությունը և 05.03.2020թ. եզրակացությունը տեղեկացնում եմ, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2019թ դեկտեմբերի 12-ին կնքված ««ԷԿԵՆԳ» ՓԲԸ կարիքների համար ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդման և սպասարկման ծառայությունների մատուցման» N ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերության կողմից ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, համաձայն որի ծառայությունների մատուցման ժամկետը սահմանված է 36 ամիս (առանց մատուցվող ծառայությունների առանձին մասերի կատարման գրաֆիկի սահմանման) բացառությամբ Պատվիրատուի կողմից ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագրերի ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի (այսուհետ՝ Հարթակ) ինտեգրման մասի, որի համար սահմանված է առավելագույնը 10 աշխատանքային օր ժամկետ, պայմանագրերը ներկայացնելուց հետո կամ դրա անհնարինության դեպքում՝ Կատարողի կողմից պատճառաբանված հիմնավորմամբ սահմանված ողջամիտ ժամկետներում՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ, իսկ Ընկերության կողմից մատուցվող ընթացիկ՝ ամսական, ծառայությունների դիմաց «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից վճարումներն*

իրականացվում են յուրաքանչյուր ամիս հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն Պայմանագրի վճարման ժամանակացույցի:

Վերը նշվածից ակնհայտ է, որ Ընկերության պայմանագրային պարտավորությունների խախտում չի կատարվել, իսկ Հարթակի պատրաստման և տեղադրման համար Ձեր կողմից միակողմանի չեն կարող սահմանվել ողջամիտ ժամկետներ, առավել ևս դրանք պարտադրվել Ընկերությանը, ինչպես նաև «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից կրած փաստացի ֆինանսական վնասը չի կարող լինել այլ գործընկերների հետ հարաբերություններում Ընկերության գործողությունների և անգործության արդյունքում:

Հարկ եմ համարում տեղեկացնել նաև, որ Ձեր կողմից ներկայացված եզրակացությունում նշված անհամապատասխանությունները ևս անհիմն են, քանի որ 28.02.2020թ որպես վերջնաժամկետ Հարթակի ներդրման, Հարթակում օգտատերերի հասանելության ապահովման (Պատվիրատուին տրամադրելով մուտքի անհատական լոգին ու գաղտնաբառ, դրա փախարինման հնարավորությամբ) համար Պայմանագրով սահմանված չէ:

Ինչևիցե, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից կարևորվում է Հարթակը շահագործելու և մինչև 2020 թվականի մարտի 15-ը օգտատերերի հասանելիությունը Հարթակին ապահովելու հանգամանքը, Ընկերությունը կփորձի մինչև 2020 թվականի մարտի 11-ը ներկայացնել Հարթակի փորձնական տարբերակ, որի շահագործումից հետո, խնդիրների առկայության դեպքում հնարավորինս սեղմ ժամկետներում կիրականացվեն համապատասխան կարգավորումներ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հետագա համագործակցության նպատակով առաջարկում եմ.

1. Ձեր կողմից ներկայացված բացասական եզրակացությունը փոխարինել դրականով և Ընկերությանը վճարել 2020թ փետրվար ամսվա ընթացում իրականացված ծառայությունների համար նախատեսված գումարը,

2. Ուսումնասիրել test.govtravel.am դոմենային տիրույթում տեղադրված Հարթակը, իրականացնել դրա փորձնական շահագործումը և Ընկերությանը ներկայացնել առաջարկներ:»:

11.03.2020թ.-ին Պատվիրատուն՝ tatyana.markaryan@ekeng.am էլ. փոստով գրությամբ դիմել է Մասնակցին՝ info@gsol.am էլ. փոստին և հայտնել հետևյալը. *«Անհրաժեշտ է ծանոթանալ կից ներկայացված տեսագրություններում առկա թերություններին և հարթակի անսարքություններին, կարգավորել դրանք՝ 2020 թվականի*

մարտի 16-ին պետական գործուղումների իրականացման համար ավիատոմսերի դուրսգրումը այդ հարթակով ապահովելու համար»:

17.03.2020թ.-ին թիվ h. 1244 գրությամբ Պատվիրատուի ղեկավարը դիմել է մասնակցին և հայտնել հետևյալը. *«Մեր կողմից ուսումնասիրվել է Ձեր՝ 2020 թվականի մարտի 16-ին էլեկտրոնային փոստով ներկայացված հղումներով առկա ամրագրման հարթակի ուսուցման դասընթացների տեսանյութերը:*

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, կարևորելով իր գործարար բարի համբավը, ոչ մի կերպ չի կարող իր պատվիրատուներին ներկայացնել նման ցածր որակի, ոչ մասնագիտական, «տնավարի» սարքած տեսա-ուղեցույցներ:

Ուղեցույցները պատրաստված են Ձեր կողմից սահմանված միջերեսի հիման վրա, որը մեր հետ չի համաձայնեցվել (պայմանագրի տեխնիկական բնութագրի խախտում), և որի հետ մենք համաձայն չենք: Այս և նմանատիպ այլ խնդիրները լուծելու համար Դուք 2 անգամ հրավիրվել եք «ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակ, սակայն չեք ներկայացել: Ուղեցույցներում (ինչպես նաև Ձեր կողմից ստեղծված հարթակում) բացակայում են կարևորագույն ֆունկցիաներ և դրանց նկարագրությունները, երբեմն տրվում են ապակողմնորոշիչ մեկնաբանություններ:

Ամենայն հավանականությամբ, Ձեր ընկերությունը ամբողջությամբ չի պատկերացնում համակարգի գործնեության տրամաբանությունը, չնայած, որ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո անցել է շուրջ 67 օր:

Մեր ընկերության կողմից թե՛ պայմանագրի կատարման համար ողջամիտ ժամկետ տրամադրելու տեսանկյունից, թե՛ գործընկերային փոխհարաբերությունների տեսանկյունից Ձեզ առաջարկվել է հանդիպել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակում, համատեղ քննարկել, ընդունել կատարված ծառայությունը, իսկ դրա անհնարինության դեպքում լուծել խնդիրները, ի դեպ՝ դրա շրջանակում կքննարկվեր նաև հարթակի միջերեսի տեսքը և այլ պարտադիր պահանջներ:

Մեր կողմից բավարար ժամկետ է տրամադրվել Ձեզ, արդյունքում, երկու ամիս անց մեզ տրվել է հարթակի ինչ-որ փորձնական տարբերակ(ներ), այն դեպքում, երբ տեխնիկական բնութագրում փորձնական տարբերակների քննարկում և դրանց հետ աշխատանք, մեր կողմից փորձնական շահագործում և այլ նման գործընթացներ նախատեսված չեն. պայմանագիրը պատրաստի արդյունքի ստացման և դրա շահագործման վերաբերյալ է:

Հայտնում ենք Ձեզ, որ 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ Ձեր կողմից տրամադրված փորձնական հարթակը չի համապատասխանում N ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին և այն հանձնել շահագործման հնարավոր չէ:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Անդրանիկ Ղուկասյանի հետ 2020 թվականի մարտի 11-ին տեղի ունեցած հեռախոսազրույցում հայտնել եք, որ Ձեր կողմից տրամադրված փորձնական հարթակում առկա անճշտություններն ու անսարքությունները կվերացնեք 1-2 օրվա ընթացքում, սակայն մինչ օրս մենք փաստացի չունենք տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան հարթակ:

Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ, այդ թվում այն, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ աշխատակազմը Ձեզ օժանդակելու և Ձեր պարտականությունները պատշաճ կազմակերպելու համար կամա թե ակամա դարձել է Ձեր փորձնական հարթակի թեստավորողը, սակայն նույնիսկ նման օժանդակություն ունենալով Ձեզ չի հաջողվել պատրաստել պատշաճ՝ տեխնիկական բնութագրին համապատասխան, շահագործման հանձնելուն ենթակա հարթակ:

Այսպիսով, լրացուցիչ ժամկետ տրամադրելն արդեն երրորդ անգամ գտնում ենք անիմաստ և հայտնում ենք մեր մտադրությունը սահմանված կարգով Պայմանագիրը լուծելու վերաբերյալ:»:

Ի պատասխան Պատվիրատուի 17.03.2020թ.-ին թիվ հ. 1244 գրությանը, Մասնակիցը հայտնել է հետևյալը. *«Ուսումնասիրելով Ձեր 17.03.2020թ. թիվ 1244 գրությունը տեղեկացնում եմ, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2019թ դեկտեմբերի 12-ին կնքված ««ԷԿԵՆԳ» ՓԲԸ կարիքների համար ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդման և սպասարկման ծառայությունների մատուցման» N ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) տեխնիկական բնութագրի 7.1 կետի համաձայն Կատարողը պարտավոր է ապահովել Հարթակից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցում՝ Հարթակի օգտատերերի համար, իսկ 7.3 կետով սահմանված է, որ ուսուցումը կազմակերպվում է Պատվիրատուի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից Ընկերությանը ներկայացվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում 400 հոգու համար ուսուցում կազմակերպելու պահանջ՝ առանց ապահովելու Պայմանագրի 7.4 պայմանը: Հաշվի առնելով ՀՀ-ում ընթացող*

հակահամաճարակային միջոցառումները կոչերը, եւ այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն արդեն իսկ ընդունել էր որոշում արտակարգ դրություն հայտարարելու մասին, Ընկերությունը հանդես եկավ առաջարկով՝ դասընթացների պահանջը վերանայելու (ժամկետի մասով), ինչը Ձեր կողմից մնաց անպատասխան: Այնուամենայնիվ զերծ մնալով ինչ որ միտումներ նկատելուց, Ընկերությունն այն կազմակերպեց տեսադասընթացի միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը և որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում դասընթացների կազմակերպման մասով առավելագույնը 3(երեք) աշխատանքային օրվա ընթացքում հարթակից օգտվելու, այն կիրառելու, գիտելիքների և հնարավորությունների ուսուցում կազմակերպելու պահանջից բացի այլ պահանջներ նախատեսված չեն, ուստի գտնում եմ, որ Ընկերությունը այդ մասով պայմանագրային պարտավորությունները լիովին կատարել է և իր կողմից տրամադրված դասընթացները համարժեք են Պայմանագրի պահանջներին:

Ինչ վերաբերում է այն գրառմանը, որ ուղեցույցները պատրաստված են մեր կողմից սահմանված միջերեսի հիման վրա, որը Ձեր հետ չի համաձայնեցվել, պետք է նշեմ, որ Ձեր կողմից տեսաուղերցի տեսքով 12.03.2020թ ներկայացված ուսումնասիրության արդյունքներում միջերեսի մասով նշվել է ընդամենը 3 նկատառում, որը մեր կողմից վերանայվել է և համապատասխան մշակմամբ հասանելի է եղել հաջորդ օրվանից, իսկ Ձեր պնդումը այդ մասով համարում եմ առնվազն ոչ իրավացի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, համաձայն որի ծառայությունների մատուցման ժամկետը սահմանված է 36 ամիս (առանց մատուցվող ծառայությունների առանձին մասերի կատարման գրաֆիկի սահմանման) բացառությամբ Պատվիրատուի կողմից ներկայացրած ավիատոմսերի մատակարարման պայմանագրերի ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի (այսուհետ՝ Հարթակ) ինտեգրման մասի, որի համար սահմանված է առավելագույնը 10 աշխատանքային օր ժամկետ, պայմանագրերը ներկայացնելուց հետո կամ դրա անհնարինության դեպքում՝ Կատարողի կողմից պատճառաբանված հիմնավորմամբ սահմանված ողջամիտ ժամկետներում՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ, իսկ Ընկերության կողմից մատուցվող ընթացիկ՝ ամսական, ծառայությունների դիմաց «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից վճարումներն

իրականացվում են յուրաքանչյուր ամիս հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն Պայմանագրի վճարման ժամանակացույցի, կրկին տեղեկացնում եմ, որ հարթակի պատրաստումը և տեղադրումը չի հանդիսանում առանձին ծառայություն և դրա մասով առանձին գումար և բացի 36 ամիսը այլ՝ առանձին ժամկետներ սահմանված չեն, հետևաբար Ձեր բնորոշմամբ ներկայացված «խախտումները» չեն կարող հանդիսանալ Ընկերության պայմանագրային պարտավորությունների խախտում, առավել ևս դրանց մասով Ձեր կողմից սահմանվեն ողջամիտ ժամկետներ, ինչից ելնելով հարկ եմ համարում կրկին հիշեցնել, որ Ձեր կողմից հրավիրված այդ 2 հանդիպումների ձևաչափը՝ հարթակի համար առանձին հանձնում- ընդունում կատարելու մասով, Ընկերության կողմից չէր կարող ընդունվել և Ձեզ առաջարկվել է այլ ձևաչափ համաձայն որի Ձեր կողմից պետք է ուսումնասիրվեր test.govtravel.am դոմենային տիրույթում տեղադրված Հարթակը, իրականացվեր դրա շահագործումը և Ընկերությանը ներկայացվեր առաջարկներ:

Ինչ վերաբերում է, որ Ընկերության կողմից տրամադրվել է հարթակի ինչ-որ փորձնական տարբերակ, տեղեկացնում եմ, որ մեր կողմից ներկայացված հարթակում փորձնական միակ տարրը հանդիսանում է Ձեր կողմից տրամադրված ինտեգրացիոն API-ների բանալիներն են:

Ողջունելով Ձեր կողմից նաև բանավոր պայմանավորվածություններին կարևորություն տալու հանգամանքը, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Անդրանիկ Ղուկասյանի հետ 2020 թվականի մարտի 11-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ պայմանավորվածությունը վերաբերել է միայն մուտքի հետ կապված խնդրին, ինչը լուծվել է նույն օրը: Հարկ եմ համարում նշել նաև, որ Ձեր գրասենյակում մենք մի քանի անգամ ունեցել ենք հանդիպումներ, որի շրջանակներում քննարկվել և մեր կողմից արվել են առաջարկներ՝ հավելյալ ֆունկցիաների, որոնք տեխնիկական բնութագրով սահմանված չէին սակայն էականորեն կբարելավվեին հարթակի աշխատանքը, ինչը ողջունվել է Ձեր կողմից եւ ներառվել համակարգում, հաշվի առնելով կարծում եմ, որ Ձեր կարծիքը Ընկերության համակարգի գործնեության տրամաբանության պատկերացման մասին պետք է հակառակը լիներ, հատկապես հաշվի առնելով որ մի քանի անգամ անձամբ հայտնել եք, որ հարթակը Ձեզ դուր է գալիս եւ այն շատ հարմարավետ է օգտագործման համար:

Ինչ վերաբերում է Պայմանագիրը միակողմանի լուծելու Ձեր մտադրությանը, տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատրաստ է իր շահերը պաշտպանել ցանկացած հարթակում, սակայն անկախ մեր կազմակերպությունների իրավական համոզմունքներից

մենք մնում ենք այն կարծիքին, որ նախընտրելի է վերադառնալ գործընկերային դաշտ եւ աշխատանքները շարունակել առաջարկված ձևաչափով, այն է

1. Ձեր կողմից ներկայացված բացասական եզրակացությունը փոխարինել դրականով և Ընկերությանը վճարել 2020թ փետրվար ամսվա ընթացում իրականացված ծառայությունների համար նախատեսված գումարը,

2. *Ուսումնասիրել test.govtravel.am ենթադոմենային տիրույթում տեղադրված Հարթակը, իրականացնել դրա փորձնական շահագործումը և Ընկերությանը ներկայացնել առաջարկներ:»:*

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 02.04.2020թ. հրապարակված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 1256 ծանուցման համաձայն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 12.12.2019թ.-ին կնքված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 02.04.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի ուժով (մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5344-2020 գրությամբ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավիատոմսերի ամրագրման և դուրս գրման համար որոնողական էլեկտրոնային հարթակի ներդման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 12.12.2019թ.-ին կնքված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ համաձայնագրի կնքումից 20 աշխատանքային օրվա ընթաքցքում: Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը համաձայնագրի կնքումից հետո 36 ամիս:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 10.01.2020թ.-ին կնքված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման պայմանագրի Համաձայնագրի 2.1 կետով սահմանվել է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և պարտադիր դառնում կնքման պահից:

Պատվիրատուի՝ տնօրենի տեղակալ Տ. Մարկարյանի կողմից կազմված պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ ի թիվս այլոց նշվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հարթակը պետք է ապահովի հաճախորդի պրոֆայլի ստեղծման, վարման և պահպանման հնարավորությունները, սակայն գործառույթն հասանելի չէ Ամրագրող 1 և Ամրագրող 2 օգտատերերի համար: Այն պարագայում, որ դա հենց այդ օգտատերերի գործիքն է: Ավիատոմսերի որոնում, ամրագրումը և դուրսգրումը ապահոված չէ: Ավիատոմսի դուրսգրման հնարավորությունը (գործառույթը) Հարթակում բացակայում է: Հարթակը պատշաճ չի աշխատում և այլն:

Վերոգրյալների հաշվառմամբ՝ Պատվիրատուն տվել է բացասական եզրակացություն:

11.03.2020թ.-ին Պատվիրատուն՝ tatyana.markaryan@ekeng.am էլ. փոստով գրությամբ Մասնակցի՝ info@gsol.am էլ. փոստին է ներկայացրել նաև հարթակի անսարքությունների և առկա թերությունների վերաբերյալ տեսագրություններ, և միաժամանակ նույն գրության հայտնել, որ անհրաժեշտ է կարգավորել դրանք՝ 2020 թվականի մարտի 16-ին պետական գործուղումների իրականացման համար ավիատոմսերի դուրսգրումը այդ հարթակով ապահովելու համար:

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 02.04.2020թ. հրապարակված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 1256 ծանուցման համաձայն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի միջև 12.12.2019թ.-ին կնքված թիվ «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/15-ԳՍ» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 02.04.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի ուժով (մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ինչպես նաև կողմերի միջև սույն ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացված գրագրությունների (նամակագրությունների) հաշվառմամբ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել է անպատշաճ և Պատվիրատուի համար ընդունելի

ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, որի արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 02.04.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 02.04.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը, սույն գործով ձեռք բերված փաստերով, մասնավորապես՝ Պատվիրատուի՝ տնօրենի տեղակալ Տ. Մարկարյանի կողմից կազմված պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ և դրա կից աղյուսակով ապացուցված է համարում, որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526 և որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ չի մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով սահմանված պահանջներին համապատասխան ծառայություն, ինչպես նաև Պայմանագրի 2.1.2 կետի հիման վրա Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց չի փոխարինել, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի ուժով:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5344-2020 գրությամբ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/107 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**